# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 4826-Հ

**ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Իսրայել Միհերի Սաֆարյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2026 թվականի մայիսի 26–ին նշանակված ծառայողական քննության վարույթով, որը իրականացվել է քաղաքացիական ծառայության հարթակով ձևավորված էթիկայի հանձնաժողովի կողմից, 2026 թվականի հունիսի 24–ի եզրակացությամբ հաստավել է ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքի առկայությունը:

Քննությամբ պարզվել է, որ Իսրայել Միհերի Սաֆարյանը թույլ է տվել վարքագծի կանոնների խախտում՝ դրսևորել է այնպիսի վարքագիծ, որը իր բնույթով հակասում է քաղաքացիական ծառայողի բարեվարքության, հարգալից վերաբերմունքի և հանրային ծառայության հեղինակության պահպանման պահանջներին, այսինքն՝ խախտել է ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4–ի N 697–Ն որոշման հավելվածով հաստատված կանոնագրքի 4–րդ, 10–րդ, 21–րդ և 23–րդ կանոնները:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1–ին կետի «ա» ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 14-ին թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 27-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև նկատի ունենալով խախտման բնույթը և դեպքի հանգամանքները.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու համար՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Իսրայել Միհերի Սաֆարյանին հայտարարել «Նախազգուշացում»:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետի պարականությունները կատարող Հովհաննես Հովհաննիսյանին՝

- հրամանի մասին սահմանված կարգով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 7–րդ մասում նշված ժամկետում տեղեկացնել Իսրայել Միհերի Սաֆարյանին:

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ
3408840229

**Տ. ԵՆՈՔՅԱՆ**

2026-06-26 12:29:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից